

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

Հ Ե Թ Ա Գ Ի Ի

Շնորհաւորական հեռագիր՝ Նորին Վ.հ.հ. Հիւսէյն Թագաւորի գահակալութեան շարժի առթիւ:

Ձեր Գահակալութեան բարեպատիկ տաւրեղաձին տոբով, Մենք եւ մեր նամակներ կը նորոգենք մեր նուիրումը Հաւիտական Գահին եւ կ'աղօթենք Ամենակալ Աստուծոյ շնորհել Ձեր Վեհափառութեան երկար կեանք, երջանկութիւն եւ փառաւորութիւն:

ՍՈՒՐԷՆ ԵՊՍ. ՔԷՄԷԱՃՆԱՆ
Պատրիարքութեան Փոխանորդ
Ս. Արքայ Նուստապի
միասնաբար ՏԻՐԱՆ ԱՐԲԵՊՍ.Ի
եւ Ս. Յակոբեանց Միաբանութեան

ԵԿԵՂԵՏԱԿԱՆՔ - ԲԵՄԱԿԱՆՔ

2 Յուլիսի Դ. օրը կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Ս. Թարգմանչաց վարդապետացն Սանակալ եւ Աթոռալայ հանդիսաւոր նախատեսակը՝ Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Զօր Նախագահութեամբ:

Յաջորդ առաւօտ, Մայր Տաճարին մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատուց, ըստ սովորութեան, Ս. Թարգմանչաց վարժարանի Տեսուչը՝ Զոգ. Տ. Կիւրեղ վրդ. և քարոզիչ՝ ընտրեալ ունենալով օրուան շարականէն «Սքանչելագործ Աստուած...», ու ծանրանալով Թարգմանիչներուն կատարած մեր ժողովուրդի գոյատեւան համար գերազանցօրէն էական գործին ու անոր շարժառիթներուն վրայ, Ս. Պատարագի ընթացքին, վարժարանի ամբողջ աշակերտութիւնը ստացաւ Ս. Հաղորդութիւն:

6 Յուլիսի Կիրակին, Գիւտ Տիոյ Ս. Աստուածածնի տօնին առթիւ, Գեր. Տ. Շնորհք Եպիսկ. Գլխաւորութեամբ, Միաբան Հայրեր մեկնեցան Գերթեմանի ձորը, ուր Ս. Աստուածածնայ Տաճարին մէջ, Ս. Կոստի զերեզմանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ. Պատարագից Զոգ. Տ. Յովսէփ վրդ. և քարոզիչ Գեր. Հանդիսապետ Սրբազանը, մեկնելով իմաստօր օրուան տօնին և ընելով պատմականը Ս. Կոստի տաճարի գլխաւորութեամբ, իմաստօր մեկնեցաւ Հին Կրատան ու Զամ Թաղի առժմ. գերեզմանալայերը, անդ ևս կատարեալ համար նոյն արարողութիւնները:

Շր. 26 Յուլիս. — Ս. Թաղէտը առաւելոյն եւ Սանդիսոյ կուսին: Երեկ՝ նախատեսակը, այսօր առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ Մայր Տաճարին մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաւոր. Պատարագից Տ. Վաղգէն վրդ.:

վերագուման համար պարտինք աշխատանք տա. նիլ: Ու մեծ է ուրախութիւնը՝ որ այս վերջին պարագային Աստուած ու երկնային գաւարթուն. ներք կ'ունենան, յաւնդի այդ շնորհներուն տունին է նոյնինքն Տէրը:

12 Յուլիսի Շաբաթ օրը, երկստան առաւելոյ տօնին առթիւ, Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Պողոսի վերամատարան մէջ:

13 Յուլիսի Կիրակին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերամատարան մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Զոգ. Տ. Կիւրեղ վրդ. քարոզիչ, իւր ինքնաշարժ օրուան շաշու Աւետարանին ընթերցուածը — հացերու բազմացման հրաշքը:

18 Յուլիս, Ուրբաթ կէսօրէ ետք, Մայր Տաճարին կից՝ Ս. Էջմիածին մատարան մէջ պաշտօնեցաւ յաջորդ օրուան նախատեսակը:

Յաջորդ օր, Յիւստակ Տապանակին տօնին առթիւ, նոյն մատարան մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Զոգ. Տ. Հայկասեր վրդ.:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ պաշտօնեցաւ Այլակերպութեան մեծահանգէս նախատեսակը, նախագահութեամբ Ամեն. ընտրեալ Սրբ. Պատրիարք Զօր. Ապա Միաբանութիւնը «Օրհնեցէք զՏէր» շարականի երգեցողութեամբ բարձրացաւ Պատրիարքարան:

— Ամեն. Սրբազանը իրեկնադէմին նախագահեց նաև Մայր Տաճարին մէջ պաշտուած «Հակման» արարողութեան:

Կիրակի, 20 Յուլիս, Վարդապետի տօնին առթիւ, Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը մատուց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ և քարոզիչ օրուան տօնին շուրջ: Ս. Պատարագէն ետք, «Օրհնեցէք զՏէր» Ս. Աթոռայ շարականը երգելով Միաբանութիւն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարանի գահիձը, ուր Ամեն. Ս. Հայրը իր օրհնութիւնէն ետք լալիս ընտրեալ մէկական Ս. Պատարագի նշխար:

— Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ կատարուած «Անդառաւանքին նախագահեց Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան:

Բշ. Յուլիս 21ին, Յիւստակ մեղեկոյի առթիւ Ս. Գլխաւորի մատարան մէջ պատարագից Զոգ. Տ. Ներսէս վրդ. և Ապա, Ամեն. ընտրեալ Ս. Պարք. Հայրը նախագահեց Մայր Տաճարին մէջ և գաւիթը՝ Երանշնորհ Տ. Կիւրեղ Պարք. Զօր շիրմին վրայ կատարուած հոգեհանգստեան կարգերուն, օրուայէ ետք, Գեր. Տ. Շնորհք Եպս. Գլխաւորութեամբ, թափօրը մեկնեցաւ Հին Կրատան ու Զամ Թաղի առժմ. գերեզմանալայերը, անդ ևս կատարեալ համար նոյն արարողութիւնները:

Շր. 26 Յուլիս. — Ս. Թաղէտը առաւելոյն եւ Սանդիսոյ կուսին: Երեկ՝ նախատեսակը, այսօր առաւօտեան ժամերգութիւնը պաշտօնեցաւ Մայր Տաճարին մէջ, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գլխաւոր. Պատարագից Տ. Վաղգէն վրդ.:

27 Յուլիսի Կիրակին, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերամատարան մէջ:

3 Օգոստոսի կիրակին, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ, Պատարագեց Հոգ. Տ. Թորգոմ վրդ. և քարոզից Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը, խօսելով երէկուայ տօնին — Ս. Որդաց եւ բոսանցն Ս. Գրիգորի Լուսաւորչին — հինգ հայրապետներու մեր նկերդեցին մէջ կատարած էական և յատկանշական զործունէութեան մասին: Ս. Պատարագէն ետք, Գեր. Տ. Սուրէն Եպս. ի նախագահութեամբ կատարուեցաւ «Թաղողօրհնէք»:

Կիր. 10 Օգոստոսին, Ս. Գարուստիան Տաճարի մեր վերնամասերուն մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին Գեր. Տ. Շնորհք Եպս. քարոզեց: Բնարան ունենալով «Մի՛ օտար ուսմունքս լինելու», յորդորելով ներկաները որ հաստատ կենան իրենց հաւատքին մէջ ու չխափուին քրիստոնէական բարոյականին խորթ վարդապետութիւններէ և կեղծ ու անիմաստ ազգասիրական քարոզչութիւններէ:

Կիր. 17 Օգոստոսին սկսան Ս. Աստուածածնայ վերափոխման տօներ կանխող ամենօրեայ հանդիսաւոր Ս. Պատարագները՝ Տիրամօր Ս. Դերեղմանին վրայ ի Գեթսեմանի: Այսօր ամբողջ Միաբանութիւնը իջաւ Գեթսեմանի, և քարոզեց Գեր. Տ. Շնորհք Եպս., բնարան ունենալով «Եթէ ոք ընտանեաց իւրոց խնամս ոչ տանիցի, ի հաւատոցն ուրացեալ է և չար քան զանհաւատն է»: Յորդորեց ծնողքները որ հոգածու ըլլան նաև իրենց զաւակաց բարոյական դաստիարակութեան, ֆիզիքականին կողքին:

24 Օգոստոսի կիրակին, Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Գարուստիան Տաճարի մեր վերնամասերուն մէջ:

Պ Ա Շ Տ Օ Ն Ա Կ Ա Ն Ք

● Ուր. 4 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց անկախութեան 182րդ տարեդարձի տոթով, Ամերիկեան Հիւպատոսարանի կողմէ տարբուած ընդունելութեան ներկայ գտնուեցան Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը, Գեր. Տ. Տ. Սուրէն և Շնորհք եպիսկոպոսներ, Հոգ. Տ. Թորգոմ վրդ. և Տիար Կարպիս Հինգլեան:

● Կիր. 20 Յուլիս. — Արար Միացեալ Պետութեան Թագաւոր Ն. Վ. Ֆէյսալ Բ. ի մահուան առթիւ, Յորդանանի մէջ շարաթ մը ամբողջ սուգ յայտարարուեցաւ:

● Բշ. 21 Յուլիս. — Այս առթիւ Գեր. Տ. Սուրէն Եպս., Հոգ. Տ. Վաղգէն վրդ. և Տիար Կարպիս Հինգլեան դացին Ամեն. և արձանագրեցին իրենց անունները Արքունի Պալատի տնօրին մէջ:

● Բշ. 28 Յուլիս. — Կէսօրէ վերջ ժամը 4ին, Ս. Ռախտի Միաբաններէն Հոգ. Տ. Զաւէն վրդ. Զինչինեան օղային զծով մեկնեցաւ իր Նոր պաշտօնատեղին՝ Աղեքսանդրիա, իրեն Առաջնորդական Փոխանորդ:

— Նոյն օրը, Ս. Ռախտի Միաբաններէն Հոգ. Տ. Գէորգ վրդ. Նազարեան օղային զծով մեկնեցաւ Պարկաստան՝ իր ծնողաց օտար զաւակներին:

● Նշ. 31 Յուլիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց Նախագահ Ն. Վ. Այզընհաւերի անձնական ներկայացուցիչ Տիար Ռոպըրթ Մըրֆի, Ս. Բաղաքս այցելութեան առթիւ այցելեց նաև Ս. Գարուստիան Տաճար ուր զիմաստրուեցաւ երեք Պատրիարքարաններու ներկայացուցիչներուն կողմէ:

● Ուր. 1 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Բաղաքիս Պելճիքական Նորընտիր Հիւպատոսը իր առաջին այցելութիւնը տուաւ Պատրիարքարանիս:

● Նք. 3 Օգոստ. — Կէսօրէ առաջ, Ամեն. ընտրեալ Ս. Պատրիարք Հայրը, Գեր. Տ. Սուրէն Եպս. Քէմհանեան և Տիար Կարպիս Հինգլեան փոխ այցելութեան դացին Պելճիքական Նորընտիր Հիւպատոսին:

● Բշ. 11 Օգոստ. — Ն. Վ. Հիւսէյն Թաղաւարի Դահակապետեան Ընդ տարեդարձի առթիւ, Պատր. Փոխ. Գեր. Տ. Սուրէն Եպս., ընկերակցութեամբ Աւագ Թորգոման Հոգ. Տ. Վաղգէն վրդ. ի և Տիար Կարպիս Հինգլեանին, մեկնեցաւ Ամեն. և ներկայանալով Արքունի Պալատ՝ ստորագրեց այցելութեան տնօրին մէջ:

ՆՈՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ

Յուլիս և Օգոստոս ամիսներու ընթացքին, Ս. Աթոռոյ Պատ. Տնօրէն Ժողովի որոշումով կատարուեցան հետևեալ պաշտօններու նշանակումները:

1) Ս. Աստուածածնայ տաճարի ամենօրեայ Ս. Պատարագները վերսկսած ըլլալով, Ս. Տաճարիս տաճամեայ տեղուց նշանակուեցաւ Հոգ. Տ. Հայկաբեր վրդ. Պայրամեան:

2) Հոգ. Տ. Զաւէն վրդ. Զինչինեանի Աղեքսանդրիա մեկնումով, իր տեղ Տպարանի տեղուց նշանակուեցաւ Հոգ. Տ. Ներսիս վրդ. Բապունեան:

3) Դարձեալ Հոգ. Տ. Զաւէն վրդ. ի տեղ, Գանձատան Յանձնախումբի անդամ նշանակուեցաւ Հոգ. Տ. Կորիւն վրդ. Մանուէլեան:

4) Հայֆայի հովուութիւնը Հոգ. Տ. Շահան վրդ. Սփանեանի Կ. Պոլիս մեկնումով Թափուր կը մնար աւելի քան տարիէ մը ի վեր: Սոյն պաշտօնին նշանակուեցաւ Հոգ. Տ. Օման Արդ. Գապուգեան, որ իր պաշտօնատեղին մեկնեցաւ Օգոստոս 19ին:

5) Ամմանի տաճամեայ հովիւը, Հոգ. Տ. Անուշտան վրդ. Զոգսանեան Ս. Աթոռ կանչուած ըլլալով, իր տեղ Ամմանի եւ շրջակայից տաճամեայ հովիւ նշանակուեցաւ Հոգ. Տ. Արիս Արդ. Շիրվանեան, որ իր պաշտօնատեղին պիտի մեկնի ի մօտոյ:

6) Հոգ. Տ. Արիս Արեղայի տեղ զաւագանակիր նշանակուեցաւ Հոգ. Տ. Դաւիթ Արդ. Մանուէլեան, որ կը վարէ միաժամանակ Կիւլպէնեան Մատենադարանի տեղութիւնը որուն կանչուած էր տարուոյս Մարտ ամսուն:

7) Տնօրէն Ժողովոյ անդամներէն երեքին շրջանները լրացուած ըլլալով Միաբ. Ընդ. Ժողովը վերընտրեց Տ. Հայկաբեր եւ Տ. Թորգոմ վարդապետները, եւ ընտրեց Տ. Վաղգէն վրդ. Գրպրոյեանը իրեն անդամ Տնօրէն Ժողովոյ:

Սիւն կը շնորհաւորէ վերոյիշեալ Հայրերը եւ կարողութիւն ու արդիւնաւոր զործունէութիւն կը մտղթէ իրենց նոր պաշտօնին մէջ: